ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ «ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-25/11»

Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար «Օդերևութաբանական ռադիոլոկացիոն կայանի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-25/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2025 թվականի սեպտեմբերի 08-ին ժամը 11:57:29-ին ստացված հարցադրումը և դրանց վերաբերյալ 2025 թվականի սեպտեմբերի 10-ին ժամը 10:30-ին տրամադրված պարզաբանումը՝

Շրջակա միջավայրի նախարարության կողմից հայտարարված «Օդերևութաբանական ռադիոլոկացիոն կայանի» ձեռքբերման բաց մրցույթին (ծածկագիր՝ ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-25/11) լիարժեք և հիմնավորված մասնակցություն ապահովելու համար խնդրում ենք պարզաբանել հետևյալ հարցերը.

Հարցադրում N 1: Խնդրում ենք տրամադրել կոնկրետ տեղակայման վայրի ճշգրիտ աշխարհագրական կոորդինատները (լայնություն, երկայնություն, բարձրություն ծովի մակերևույթից), որտեղ նախատեսվում է տեղադրել ռադարը և աշտարակը: Առանց այս տվյալների անհնար է կատարել ենթակառուցվածքային և լոգիստիկ հաշվարկներ:

Պարզաբանում N 1: Աշխարհագրական կոորդինատներն են՝ 40.51792N, 44.52238E

Հարցադրում N 2: Խնդրում ենք նշել՝ արդյոք պատվիրատուն կտրամադրի հողատարածքը պատրաստ հիմքով (ֆունդամենտով), թե՞ հիմքի կառուցումն էլ է մատակարարի պարտականությունը

Պարզաբանում N 2: Պատվիրատուն կտրամադրի միայն հողատարածքը: Հիմքի (ֆունդամենտի) կառուցումը մատակարարի պարտականությունն է:

Հարցադրում N 3: Խնդրում ենք հստակեցնել, արդյոք պատվիրատուն նախատեսում է ապահովել կայանի տարածքի մուտքը դեպի հիմնական էլեկտրացանց և կապի ենթակառուցվածքներ, թե՞ մատակարարը պետք է դա նույնպես կազմակերպի

Պարզաբանում N 3: Մուտքը դեպի հիմնական էլեկտրացանց և կապի ենթակառուցվածքներ ապահովում է պատվիրատուն:

Հարցադրում N 4: Խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն տվյալ վայրի մթնոլորտային և կլիմայական պայմանների (միջին քամու արագություն, առավելագույն քամու պոռթկում, տեղումների տարեկան քանակ և այլն) մասին, որոնք անհրաժեշտ են աշտարակի և ապաստարանի ճարտարագիտական նախագծման համար:

Պարզաբանում N 4: Տվյալ վայրի մթնոլորտային և կլիմայական պայմանների տարեկան տեղեկատվությունը

Քամու արագություն, մ/վ միջին 4.1 պոռթկում 45
Տեղումների քանակ,մմ 1007
Օդի ջերմաստիճան,°C նվազագույն -34 միջին -2.6 առավելագույն +21
Օդի հարաբերական խոնավություն, % 74
Մթնոլորտային ճնշում, հՊա 686

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-25/11» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **Լ.Զոհրաբյանին:**

Հեռախոս՝ (011) 818 529:
Էլեկտրանային փոստ՝ gnumner@env.am:

«ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-25/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով